ՍԱՂՄՈՍ 39

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Կյանքի ունայնությունը <u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, Դավթի Սաղմոսը	Աղոթք իմաս-տության և ներման համար	Հիվանդության ժամանակ բժշկության աղոթք (Ողբ)	Տառապյալ մարդու խոստովանություն	Մարդկային էակների աննշանակալիությունը Աստծո առջև
39:1-6	39:1-3	39:1-6	39:1-4	39:1-2
				39:3-4
	39:4-6			
			39:5-6	39:5-6
39:7-11	39:7-11	39:7-10	39:7-11	39:7-9
				39:10-11
		39:11		
39:12-13	39:12-13	39:12-13	39:12-13	39:12-13

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Առաջին հայացքից այս Սաղմոսը շփոթեցնող է: Այն սկսում է քողարկված գրական տեխնիկայով, գրեթե ինչպես աստվածային գաղտնիք, որը հնարավոր չէ կիսվել՝ հասկանալ հավատարիմ մարդկանց (սակայն մեղավոր) ՅԱՀՎԵԻ հետ ունեցած կյանքը, Սաղմ. 39:8:

Բ. Աստվածային գաղտնիքը և մարդկային հարցը մարդու կյանքի անցողիկությունն է: Մարդկությունը այնքան տկար, փխրուն, ժամանակավոր, տգետ է և սովորաբար իր կետրոնացումն ուղղում է սխալ բաների վրա (տես՝ Սաղմ. 39:6,11):

Գ. Այս Սաղմոսը շատ կերպերով հիշեցնում է ինձ Ժողովող գիրքը (կյանքի ունայնությունը, եթե չկա Աստված): Սաղմոսերգուն իրեն բնութագրում է զարմանալի կերպերով՝
1. պանդուխտի պես, Սաղմ. 39:12
2. անցորդի պես, Սաղմ. 39:12

Դ. Սաղմոս 39:13 դեռևս առեղծված է ինձ համար: Մեր ընկած վիճակի մասին սթափեցնող ճշմարտությունն այն է՝
1. որ Աստված հետաքրքրված է մեզնով
2. Նրա սրբությունը վախեցնում և վանում է մեզ, երկուսը միասին:

Իրական մտավոր բախում կա մարդու անցողիկ վիճակի և մեր Աստծո հավիտենականության միջև, որը մեզ ստեղծել է մեր հետ փոխհարաբերվելու համար: Մենք չենք կարող ուրախ լինել առանց Նրան ճանաչելու և սիրելու: Սակայն մենք կոտրված և ժամանակավոր ենք: Նա կատարյալ է և հավիտենական:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 39:1-6

[1]Ասացի, թե զգուշություն անեմ ճանապարհներիս,
Որպեսզի լեզվովս չմեղանչեմ, բերանս սանձով պահեմ՝
Մինչև ամբարիշտն իմ առջև է:
[2]Հմար եղա լռությամբ, *նույնիսկ* բարու վերաբերյալ լռեցի,
Ու վիշտս բորբոքվեց:
[3]Սիրտս տաքացավ ներսումս, մինչև մտորում էի՝
Կրակ բռնկվեց, *այն* ժամանակ խոսեցի լեզվովս:
[4] «ՏԵՐ, ցո՛ւյց տուր իմ վերջը, և թե որքան է օրերիս չափը,
Թող իմանամ, թե ինչպե՞ս անցավոր եմ»:
[5]Ահա իմ օրերը սահմանեցիր թզաչափով,
Ու իմ կյանքի տևողությունը ոչնչի պես է Քո առաջ.
Իսկապես, յուրաքանչյուր մարդ,
Իր լավագույն վիճակում, միանգամայն ունայնություն է: Սելա:
[6]Իսկապես մարդ շրջում է որպես մի ստվեր,
Իսկապես իզուր է հոգս քաշում, դիզում է,
Բայց չգիտի, թե ո՞ւմ է մնալու դիզածը:

39:1-6 Ամբարիշտը ապրում է միայն այսօրվա համար, իրենց իսկ համար, սակայն հավատարիմ հետևորդը գիտի, որ ապրում և խոսում է ՅԱՀՎԵԻ համար: Սակայն, առանց Սուրբ Հոգու օգնության (տես՝ Հովհ. 6:44, 65) ամբարիշտը չի կարող հասկանալ՝
1. իրենց իսկ հոգևոր և ֆիզիկական վիճակը
2. Աստծո ճշմարտությունը

Նրանք հարցնում են սխալ հարցեր և կենտրոնանում սխալ բաների վրա:

39:1 «զգուշություն անեմ» Նկատեք, որ ԲԱՅԸ (BDB 1036, KB 1581, *Qal* ԸՂՁԱԿԱՆ) կրկնվում է: Սաղմոսերգուն չպետք է խոսեր կյանքի և Աստծո մասին իր մտքերի մասին խորացված անհավատության առկայությամբ (այսինքն՝ Մատթ. 7:6): Այս պարբերությունը չի կարող լինել ապացույց հանդիսացող տեքստ, որպես որ Սուրբ Գիրքը դեմ է ուրիշներին վկայելուն: Սակայն ճիշտ է, որ որոշ հարցերից, որոշ վարդապետություններից պետք է խուսափել առաջին հերթին

անհավատների հետ մեր խոսակցությունների ժամանակ, հավանական սխալ հասկացության կամ շփոթմունքի պատճառով: Սուրբգրային աշխարհայացքը պահանջում է՝

1. Հոգին (տես՝ Հովհ. 6:44, 65)
2. ընդունող՝ բաց սիրտ (Մատթևոս 13)
3. հայտնություն հասկանալի ձևով
4. ժամանակ, ջանք

UBS *Ձեռնակը* (էջ՝ 374) մեկնաբանում է լռությունը որպես Սաղմոսերգուի դժկամություն բողոքելու իր կյանքի շուրջ ամբարիշտների ներկայությամբ:

❖ **«որպեսզի լեզվովս չմեղանչեմ»** Մեղանչելն այստեղ պետք է հասկանալ համատեքստի մեջ որպես ճշմարտություն խոսելը, որը ամբարիշտները չեն կարող ընդունել (տես՝ Մատթ. 7:6):

39:2-3 Ըստ երևույթին սաղմոսերգուն փորձում էր չմտածել այս հարցերի շուրջ հենց ինքն էլ: Սակայն հայտնությունը հարկադրում էր նրան դիմել Աստծուն այս հարցով և մտահոգությամբ՝ մարդկային կյանքի անցողիկության և ունայնության շուրջ:

39:2 «նույնիսկ բարու վերաբերյալ լռեցի» MT այս տողը տալիս է որպես «ես անօգուտ լռեցի» (այսինքն՝ առանց հաջողության. բառացի՝ «օգուտ չկար», BDB 373): Սա անորոշ է և տարբեր թարգմանություններ տարբեր կերպ են թարգմանում: Համատեքստում այն նկատի ունի սաղմոս-երգուի խոսելու ցանկությանը, սակայն այն զգացողությանը, որ կարիք չկա խոսելու: Նրա խոսելու դժկամությունը չօգնեց իրավիճակին:

Եթե կյանքը այդքան կարճ է, ինչի՞ վրա պետք է կենտրոնանա մեղավոր մարդկությունը: Արդարի և անարդարի վերջը կարծես թե նույնն է (տես՝ Ժող. 2:14-16, 19, 26, 9:2-3):

39:3 «կրակ բռնկվեց» Այս ԲԱՅԸ (BDB 128, KB 145, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) նույն ԲԱՅՆ է, որը բնութագրում է Երեմիայի հարկադրանքը ՅԱՀՎԵԻ խոսքը խոսելու (տես՝ Երեմ. 20:9):

39:4-6 Սրանք այն հարցերն են, որոնց շուրջ «մտորում» էր սաղմոսերգուն (BDB 211, տես՝ Սաղմ. 5:1)՝

1. կյանքի անորոշությունը
2. կյանքի անցողիկությունը
3. կյանքի սխալ նպատակը՝ կենտրոնացումը (այսինքն՝ հռչակը, հարստությունը)
4. կյանքի անարդարությունը

39:5 «թզաչափ» Այս տերմինը (BDB 381) եբրայական չափման մի քանի միավորներից մեկն է, որը արտահայտվում է մարմնի մասով (տես՝ Հատուկ Թեմա. Կանգուն):

1. մեկնված ձեռքի չափը
2. մատի ծայրից մինչև արմունկը
3. բացված մատների չափը՝ թզաչափ
4. չորս մատները միասին
5. մի մատ միավորը

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *ԿԱՆԳՈՒՆ*
SPECIAL TOPIC: *CUBIT*

Աստվածաշնչում գոյություն ունեն երկու կանգուններ (BDB 52, KB 61): Սովորական կանգունը միջահասակ մարդու ամենաերկար մատից մինչև նրա արմունկը ընկած հեռավորությունն է, սովորաբար 18 դյույմ (օրինակ՝ Ծնն. 6:15, Ելից 25:10, 17, 23, 26:2,8,13,16, 27:1,9,12,13,14,16,18, Թվոց 35:4,5, 2 Օր. 3:11): Նաև գոյություն ունի ավելի երկար կանգուն (արքայական կանգուն), որը օգտագործվում է շինարարության մեջ (այսինքն՝ Սողոմոնի

տաճարում), որը տարածված էր Եգիպտոսում (21 մատնաչափ), Պաղեստինում (24 մատնաչափ) և երբեմն Բաբելոնում (30 մատնաչափ): Այն 21 դյույմ երկարություն է (տես՝ 2 Մնաց. 3:3, Եզեկ. 40:5, 43:13):

Հնում մարդիկ օգտագործում էին մարդկային մարմնի մասերով չափման միավորներ: Հնագույն Մերձավոր Արևելքում օգտագործում էին՝

1. մեկնված ձեռքը
2. արմունկից մինչև միջնամատի հեռավորությունը (կանգուն)
3. բացված բթամատի և ճկույթի միջև հեռավորությունը (թզաչափ, տես՝ Ելից 28:16, 39:9, 1 թագ. 17:4)
4. բոլոր չորս մատների փակված վիճակում չափսը (մի բռունցք, տես՝ Ելից 25:25, 37:12, 3 Թագ. 7:26, 2 Մնաց. 4:5)
5. մատների մեջտեղի հոդի չափսը (մատնաչափ, Երեմ. 52:21):

❖ **«իմ կյանքի տևողությունը ոչնչի պես է Քո առաջ»** Սա չի հայտարարում, որ ՅԱՀՎԵՆ հոգ չի տանում, այլ որ մարդկային կյանքը անցողիկ է և աննշանակալի, երբ համեմատում ես ՅԱՀՎԵԻ հետ (տես՝ Ես. 40:15):

❖ **«միանգամայն ունայնություն/շունչ»** Այս արտահայտությունը (BDB 481 ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 210 I) մեկ այլ կապ է Ժողովողի հետ (տես՝ Ժող. 1:2, 12:8, բառացի՝ «գոլորշի», «շունչ», «ունայնություն», տես՝ Հատուկ Թեմա. Զուր, դատարկ, ոչնչություն): Այս տերմինը Ժողովողում կիրառվում է երեսուն անգամ և միայն ինը անգամ՝ Սաղմոսներում (տես՝ Սաղմ. 39:5,6,11, 144:4) և երեք անգամ էլ՝ Առակացում:

❖ **«Սելա»** Տես՝ Սաղմոս 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածություն, VII:

39:6 «ուրվական/ստվեր» Սա բառացի «ստվեր» (BDB 853) է: Այն կարող է նկատի ունենալ ամպեր, սակայն պարբերաբար կիրառվում է փոխաբերական իմաստով անցողիկ կյանքի համար (տես՝ Հոբ 8:9, 14:2, Սաղմ. 102:11, 109:23, 144:4): Սա այս Սաղմոսի խնդրահարցն է: Սաղմոս 8-ը կարող է լինել լավ աստվածաբանական զուգահեռը:

❖ **«դիզում է, բայց չգիտի, թե ո՞ւմ է մնալու դիզածը»** Սա այնքան նման է *Qoheleth* մտքին՝ Ժող. 2:18-23-ում: Տես՝ Հատուկ Թեմա. Հարստություն:

NASB Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 778) այս համարի շուրջ գեղեցիկ մեկնություն է ներկայացնում:

«Կարող էր նույնիսկ Ժողովող գրքի համար ամփոփիչ խոսք հանդիսանալ»:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 39:7-11

7 «Ու հիմա ի՞նչ բանի սպասեմ, ո՛վ ՏԵՐ, իմ հույսը Դու ես:
8Փրկի՛ր ինձ իմ բոլոր հանցանքներից,
Ինձ անմիտների նախատինքի առարկա մի՛ դարձրու:
9Լուռ մնացի, բերանս չբացեցի, քանզի դա Քո արածն էր:
10Հեռացրո՛ւ ինձնից Քո հարվածը.
Քո ձեռքի հարվածից ես սպառվեցի:
11Երբ անօրենության համար հանդիմանելով խրատում ես մարդուն,
Ցեցի պես մաշեցնում ես նրա գեղեցկությունը.
Իսկապես ամեն մարդ ունայնություն է: Սելա:

39:7-11 Այս պարբերությունը ընդհանուր ամփոփում է, թե ինչպես է ՅԱՀՎԵՆ վարվում Իր հավատարիմ հետևորդների հետ մեղավոր աշխարհում կյանքի բոլոր հարցերի և շփոթության մեջ:

1. նրանք սպասում են ՅԱՀՎԵԻՆ
2. նրանք ապավինում են ՅԱՀՎԵԻՆ (#1, 2 աստվածաբանական բանալի են մեր առեղծվածային և անցողիկ կյանքերում)
3. նրանք աղոթում են ՅԱՀՎԵԻՑ փրկություն ստանալու համար – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ Սաղմ.51:14, 79:9)
4. նրանք աղոթում են, որ անմիտ չլինեն – BDB 962, KB 1321, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
5. ՅԱՀՎԵՆ առաջնորդում մեր խոսքերն ու կյանքը (տես՝ Սաղմոս 139)
6. նրանք փնտրում են ՅԱՀՎԵԻ դատաստանից ազատում – BDB 693, KB 747, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սաղմոս 39:10-11-ում ՅԱՀՎԵԻ գործողությունների պատճառներն են գրանցվում՝

1. ՅԱՀՎԵՆ ակտիվ է նրանց կյանքերում
2. ՅԱՀՎԵԻ դատաստանները խրատական են, ոչ թե պարզապես պատժիչ
3. ՅԱՀՎԵՆ հեռացնում է այն բաները, որոնց վստահում ենք և փայփայում ավելին, քան Իրեն: Ամեն բան բացի ՅԱՀՎԵԻՑ անցողիկ է: Հուսով եմ, հասկանում եք:

39:10

NASB, NKJV, JPSOA	**«ժանտախտ»**
NRSV	**«կաթված»**
TEV, REB	**«հարված»**
NJB, LXX	**«պատուհաս»**

Եբրայերեն ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 619, տես Սաղմ.38:11-ի գրառումը) հաճախ կիրառվում է ՅԱՀՎԵԻ կողմից ուղարկված հիվանդության համար:

1. ժանտախտ – Ծնն.12:17, Ելից 11:1, 3 Թագ.8:37, Սաղմ.38:11, 39:10
2. կաթված՝ հարված – Սաղմ.89:23, Ես.53:8
3. պատուհաս – Սաղմ.89:23

ՅԱՀՎԵՆ կարող է հեռացնել այն, քանի որ Նա՛ է ուղարկել: Կյանքում միշտ դժվար է, եթե ոչ անհնար, իմանալ հիվանդության, դեպքի, ճգնաժամի և այլնի աղբյուրը: ՀԿ-յան աստվածաբանությունը վերագրում է բոլոր պատահականությունները ՅԱՀՎԵԻՆ որպես միաստվածության հաստատման աստվածաբանական մի կերպ: Սակայն ՆԿ-ի զարգացող հայտնությունից մի քանի տարբերակներ են առաջարկվում՝

1. Աստված է ուղարկում երևույթները՝
   ա.պատժի համար
   բ. հոգևոր աճի համար (տես՝ Եբր.5:8)
2. Աստված թույլ է տալիս (ոչ թե ուղարկում) ինչ-որ բաներ տեղի ունենան
3. մենք ապրում ենք մեղավոր աշխարհում, որտեղ վատ բաներ են տեղի ունենում (վիճակագրական չարը)

Ես ընտրել եմ՝ հավատքով (ինչպես և սաղմոսերգուն) վստահել, հուսալ և սպասել (տես՝ Սաղմ. 38:15, 39:7) Աստծուն կյանքի առեղծվածային, անարդար, հաճախ չար դեպքերի մեջ: Ես չեմ հասկանում «ինչու» կամ «ինչու հիմա» կամ «ինչու սա» կամ «մինչև երբ», բայց հավատքով վստահում եմ, որ Աստված իմ հետ է, իմ համար, և կարող են լինել բոլոր բաների համար էլ նպատակ և ազդեցիկ հետևանք (տես՝ Հռոմ.8:28-30, 31-39): Սա աշխարհայացք է, հավատքի դիրքորոշում, աստվածաբանական կողմնորոշում:

❖ **«Քո ձեռքի հարվածից»** Ձեռքը դարձվածք է գործելու ուժի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ՁԵՌՔ): Աստվածաբանական հարցի համար տես՝ Սաղմ.32:4 և 38:2: Սա հրաշալի փոխաբերություն է

Աստծո համար, որպես խրատող և սիրող ծնող (տես՝ Առակ. 3:11-12): Նա ակտիվ է մեր կյանքերում, քանի որ չի ուզում, որ մենք կործանենք մեզ և ուրիշներին: Խրատի «ձեռքը» լավ նպատակով է (տես՝ Երր. 12:5-13):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 39:12-13
[12]Լսի՛ր իմ աղոթքը, ՏԵՐ, ու ակա՛նջ դիր աղաղակիս.
Լռության մի՛ մատնիր իմ արցունքները,
Քանի որ Քո առաջ մի պանդուխտ եմ ես,
Մի անցորդ եմ իմ բոլոր հայրերի նման:
[13]Խնայի՛ր ինձ, որպեսզի ուժս վերականգնեմ,
Նախքան այստեղից գնալս ու չլինելս»:

39:12-13 Ինչպես որ տարածված է Սաղմոսներում, ավարտվում է աղոթքի խնդրանքներով:
1. Լսիր – BDB 1033, KB 1570, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. Ականջ դիր – BDB 24, KB 27, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. Լռության մի՛ մատնիր – BDB 361, KB 357, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 28:1, 35:22, 83:1, 109:1
4. Խնայիր ինձ – BDB 1043, KB 1609, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Հոբ 7:17-19, 10:20-21, 14:6
5. որպեսզի ուրախանամ/ուժս վերականգնեմ – BDB 114, KB 132, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ, տես՝ Հոբ 9:27, 10:20

39:12 Այս համարի վերջին երկու տողերը փոխանցում են լարվածությունը՝
1. հատուկ ուխտի ժողովրդի
2. և անցողիկ կյանքերով շարունակ մեղանչողների միջև (տես՝ 1 Մնաց. 29:15, Սաղմ. 119:19, 54, Երր. 11:13, 1 Պետ. 2:11):

Հիշեք, որ սա ՀԿ-ի մառախուղն է: Հիսուս Քրիստոսի Ավետարանը անդրադառնալու է կյանքի, նպատակի և հավիտենության վերաբերյալ այս հարցերից շատերին:

❖ **«ես պանդուխտ եմ»** Այս բառը՝ գաղափարը անհանգստացնում է ինձ: Այն կարծես թե վերաբերում է մի մարդու, որն Աստծուն չի ճանաչում կամ էլ Աստված նրան չի ճանաչում: Սակայն համատեքստում այն նկատի ունի վրանի մեջ մի այցելուի, ով մնում է մեկ կամ երկու գիշեր և հեռանում: Սա ևս մեկ փոխաբերական լեզվի օրինակ է, որը կիրառված է նկարագրելու մարդկային կյանքի անցողիկությունը:

39:13 ՅԱՀՎԵԻ սրբության լույսի ներքո, այս կյանքը դառնում է նեղություններով լի (տես՝ Հոբ 14:6): ՅԱՀՎԵԻՆ նմանվելու ցանկությունը (տես՝ Մատթ. 5:48, Ղևտ. 19:2) ճնշող է: Միայն Հիսուսով կարող է մեր համար խաղաղություն գալ լինելու սուրբ Աստծո ներկայության մեջ (այսինքն՝ նայիր. համադրված է ՅԱՀՎԵԻ դատաստանի հետ, տես՝ Հոբ 7:19, 14:6, Ես. 22:4):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է սաղմոսերգուն կամենում լուռ մնալ ամբարիշտների ներկայությամբ (Սաղմ. 39:1):
2. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք Սաղմ. 39:4-ի նշանակությունը:
3. Ի՞նչ է «թզաչափը»:
4. Բացատրե՛ք Սաղմ. 39:11բ: Ինչո՞ւ էր ՅԱՀՎԵՆ Իր հետևորդներից մեկից վերցրել նրա ամենաարժեքավոր բաները:
5. Արդյո՞ք Սաղմ. 39:11գ ակնարկում է, որ ՅԱՀՎԵՆ հոգ չի տանում անհատ մարդկանց համար:
6. Ի՞նչ է նշանակում Սաղմ. 39:12գ և դ: Արդյո՞ք մենք պանդուխտներ ենք ՅԱՀՎԵԻ համար:
7. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք Սաղմ. 39:13-ի նշանակությունը կամ կիրառությունը: